

ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգը սահմանում է Բանկի հետ կապված անձանց գործարքների կնքման պայմանները:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն բանկի հետ կապված են համարվում հետևյալ անձինք՝

- ա) բանկի ղեկավարները.
- բ) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք.
- գ) բանկի ղեկավարների և/կամ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված և/կամ համագործակցող անձինք.
- դ) բանկի հետ փոխկապակցված անձինք

Բանկի աշխատակիցների և Խորհրդի անդամների հետ գործարքները

Բանկի աշխատակիցների և Խորհրդի անդամների հետ գործարքները կնքվում են համաձայն Բանկի Աշխատակցի Ձեռնարկում («Բանկային արտոնություններ և Աշխատակիցների վարկավորման քաղաքականություն» բաժին) սահմանված պայմանների:

Բանկի աշխատակից և Խորհրդի անդամ չհանդիսացող Բանկի հետ կապված այլ անձանց հետ գործարքները

Բանկի աշխատակից և Խորհրդի անդամ չհանդիսացող Բանկի հետ կապված այլ անձանց հետ գործարքները կնքվում են գործարքի պահին գործող արտոնյալ շուկայական սակագներով: Նման գործարքները պետք է հաստատվեն Բանկի համապատասխան իրավասու ղեկավարի/կառավարչի կողմից: Սույն ընթացակարգի իմաստով արտոնյալ շուկայական են այն սակագները, որոնք ավելի ավելի բարենպաստ են գործարքի կնքման պահին շուկայում գործող սակագներից և առաջարկվում են Բանկի հաճախորդներին բացառության կարգով:

Սույն ընթացակարգի շրջանակներից դուրս բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները պետք է հաստատվեն Խորհրդի կողմից: